«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ՓՈԽԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ԲԵՌՆԵՐԻ) ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 5

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 5

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ 7

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ 11

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ 12

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ 13

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ 14

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ 17

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ 19

ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ 21

ԲԱԺԻՆ 14. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 24

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 24

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 25

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 25

ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 27

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով սահմանված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել, ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5. Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, և տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական ինտերնետային կայքում:

1.6. Կանոնների համաձայն Ապահովագրողը, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, Ապահովադիրների հետ կնքում է Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրության Պայմանագիր:

1.7. Կանոնների համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) Կանոններով սահմանված կարգով հատուցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն ամբողջությամբ կամ նրա մի մասը՝ կախված պատճառված վնասի չափից և Պայմանագրի պայմաններից, նրա մի մասը՝ կախված պատճառված վնասի չափից և Պայմանագրի Կանոններից:

1.8. Սույն Կանոններով ապահովագրման ենթակա են՝

1.8.1. փոխադրվող գույքը (բեռները), և/կամ

1.8.2. բեռի տեղափոխման տրանսպորտային ծախսերը և միջանկյալ պահպանման ծախսերը, և/կամ

1.8.3. այլ ծախսերը (բեռի տեղափոխման հետ կապված հնարավոր վճարվող տուրքերը, հարկերը և այլ նմանատիպ ծախսերը):

1.9. Պայմանագիրը կարող է կնքվել միայն այն անձի (Շահառուի) օգտին, որն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով փոխադրվող բեռի պահպանման և անվտանգության համար ունի ուղղակի հետաքրքրություն:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

2.2. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

2.1.1. **Ապահովագրող**՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ,

2.1.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին,

2.1.3. **Շահառու՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, ով ապահովագրված գույքի (բեռի) նկատմամբ ունի գույքային շահ,

2.1.4. **Շահագրգիռ անձ՝** Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչները, վերջինների հետ բեռի փոխադրման հետ կապված պայմանագրային (այդ թվում՝ աշխատանքային, ծառայությունների մատուցման, բեռնափոխադրման, տրանսպորտային առաքման և այլն) հարաբերությունների մեջ գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

2.1.5. **Ներկայացուցիչներ՝** Ապահովադրի կամ Շահառուի կողմից վարձատրվող կամ չվարձատրվող անձինք, որոնք ապահովագրված բեռի հետ կապված գործողություններ են կատարում Ապահովադրի կամ Շահառուի կողմից տրամադրված լիազորությունների հիման վրա (հանձնարարություն, գործակալություն և այլն),

2.1.6. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:

2.1.7. **Ապահովագրական սակագին՝** սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

2.1.8. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

2.1.9. **Չհատուցվող գումար՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար,

2.1.10. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

2.1.11. **Փոխադրվող գույք կամ բեռ** (այսուհետ՝ բեռ)՝ Պայմանագրում նշված գույք, որը նախատեսվում է տեղափոխել տարածության մեջ,

2.1.12. **Բեռնափոխադրում՝** բեռի տեղափոխումը ցանկացած փոխադրամիջոցի օգնությամբ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ծովային, գետային և խողովակաշարային միջոցներով փոխադրվող բեռների տնօրինման, օգտագործման կամ տիրապետման հետ:

3.2. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրում ապահովագրության տարածք է համարվում այն պետությունների տարածքը, որոնց անվանումը նշված է Պայմանագրում, կամ որոնցով անցնում են բեռի բեռնման պետության տարածքից մինչև նշանակման վայրի պետության տարածքը բեռնափոխադրման համար սովորաբար օգտագործվող երթուղիները:

3.3. Պայմանագիրը կարող է գործել աշխարհի բոլոր պետությունների տարածքներում: Ապահովագրողի կողմից այլ դիրքորոշման բացակայության դեպքում Պայմանագիրը չի գործում/տարածվում՝

3.3.1. պատերազմական դրության մեջ գտնվող պետությունների տարածքում,

3.3.2. այն պետությունների տարածքում, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և/կամ ռազմական սանկցիաներ,

3.3.3. այն պետությունների տարածքներում, որոնց սահմաններում Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և ճանաչվել են համաճարակների օջախներ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Կանոնների համաձայն՝ ապահովագրական ռիսկն այն իրադարձությունն է, որն ունի առաջացման որոշակի հավանականություն և կարող է առաջանալ պատահականորեն, որի համար տրամադրվում է ապահովագրական ծածկույթ:

4.2. Կախված բեռների տեսակից, փոխադրման պայմաններից, առևտրային սովորույթներից և առևտրային պայմանագրերի պահանջներից բեռների կամավոր ապահովագրությունը կարող է իրականացվել հետևյալ ապահովագրական պատահարներից (ռիսկերից).

4.2.1. **«Բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ»**: «Բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ» պայմանի հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն ապահովագրական պատահարներ են համարվում և հատուցման ենթակա են ամբողջ բեռի կամ նրա մի մասի՝ ցանկացած պատճառով տեղի ունեցած պատահական բնույթ կրող ոչնչացումը, կորուստը կամ վնասումը՝ բացառությամբ Կանոնների 5.1 կետում թվարկված դեպքերի:

4.2.2. «**Սահմանափակ պատասխանատվությամբ»**: Սահմանափակ պատասխանատվությամբ պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն, բացառությամբ Կանոնների 5.1 կետում թվարկված դեպքերի, պատահարներ են համարվում ամբողջ բեռի կամ նրա մի մասի ոչնչացումը, կորուստը կամ վնասումը, որոնք արդյունք են՝

4.2.2.1. հրդեհի կամ պայթյունի, ինչպես նաև հրդեհը մարելու նպատակով իրականացվող գործողությունների,

4.2.2.2. բեռը տեղափոխող նավի բախման, կործանման, շրջման կամ խորտակման, ծանծաղուտի վրա նստելու, ափ դուրս գցվելու,

4.2.2.3. ապահովագրված բեռը տեղափոխող ցամաքային տրանսպորտային միջոցների ճանապարհատրանսպորտային պատահարի, վթարի, բախման, շրջման,

4.2.2.4. թռչող սարքերի կամ նրանց մասերի ընկնելու,

4.2.2.5. ապահովագրված բեռը տեղափոխող օդանավի վթարի,

4.2.2.6. տրանսպորտային կոմունիկացիաների (կամուրջների, թունելների, ավտոճանապարհների և այլն), պահեստների և այլ շինությունների կառույցների ավերման՝ ներառելով ամբարտակների, խողովակաշարերի և ուղեխողովակների վնասումը,

4.2.2.7. տրանսպորտային միջոցի անհետ կորելու (բացառությամբ ավտոմոբիլային փոխադրումների),

4.2.2.8. նավի մեջ ջրի հանկարծակի ներթափանցման և դրա հետևանքով նավամբարում կամ տախտակամածի փակ բեռնարկղում գտնվող բեռի խոնավացման,

4.2.2.9. չնախատեսված վայրում (օդանավակայանում, ապաստարանում և այլ)՝ հատուկ պայմաններում բեռի բեռնաթափման,

4.2.2.10. վթարի և փրկման աշխատանքների դեպքում բեռի զոհաբերման,

4.2.2.11. քարաթափման, սողանքների, հողային մակերևույթի քանդման, ձնհալի հոսքի կամ հորդառատ անձրևի, եթե նշված է պայմանագրում,

4.2.2.12. կայծակնահարության, հրաբխի, ջրհեղեղի, ցունամիի, մրրիկի, փոթորկի կամ այլ տարերային աղետների: Երկրաշարժ ռիսկից ապահովագրություն իրականացվում է, եթե պայմանագրում ուղղակիորեն նշում կա այդ մասին:

4.2.3. **«Առանց վնասների համար պատասխանատվությամբ»:** «Առանց վնասների համար պատասխանատվությամբ» պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն ապահովագրական պատահարներ են համարվում բեռի կամ նրա մի մասի ամբողջական ոչնչացումը, որոնք հետևանք են սույն Կանոնների 4.2.2 ենթակետում թվարկված դեպքերի, բացառությամբ Կանոնների 5.1 կետում թվարկված դեպքերի:

4.2.4. **Ապահովագրության լրացուցիչ պայմաններ:** Ապահովագրության լրացուցիչ պայմաններով կոնտեյներներով կամ լիխտերով տախտակամածում տեղակայված բեռները կարող են ապահովագրվել 4.2.1, 4.2.2 և 4.2.3 ենթակետերում նշված ապահովագրության պայմաններից ցանկացածով՝

4.2.4.1. այն բեռները, որոնք բեռնվել են տախտակամած Ապահովադրի ցանկությամբ, հանձնարարությամբ և համաձայնությամբ, կարող են ապահովագրվել միայն 4.2.2 կամ 4.2.3 ենթակետերում նշված ապահովագրության պայմաններով (այս դեպքում լրացուցիչ ապահովագրավճարի մուծման դեպքում բեռը կարող է ապահովագրվել նաև անկանխատեսելի պատահարների արդյունքում ալիքով լվացման, տախտակամածից դուրս ընկնելու հետևանքով ոչնչացման կամ վնասման ռիսկից),

4.2.4.2. լիխտերով, լաստանավերով, լաստերով կամ այլ նմանատիպ փոխադրամիջոցներով բեռների տեղափոխման ժամանակ Ապահովագրողը

պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե այդպիսի նավերի օգտագործումը տեղական պայմաններում սովորական բնույթ է կրում,

4.2.4.3. կենդանիների, թռչունների համաճարակների կամ նրանց հետ տեղի ունեցած դժբախտ պատահարների արդյունքում պատճառված վնասները, բեռի կորստի կամ թափթփման, ապակիների, հախճապակու, կերամիկայի, մարմարի կամ նրանցից պատրաստված իրերի ջարդումից կամ կոտրումից, ցանկացած տեսակի աղյուսի, աղացաքարի, սրաքարի կամ վիմագիր քարերի, գրաֆիտային, էլեկտրոդների կամ այլ ջարդվող առարկաներին հասցված վնասները 4.2.2 կամ 4.2.3 ենթակետերում նշված ապահովագրության պայմաններով ապահովագրության դեպքում հատուցվում են միայն այն դեպքում, եթե այդ վնասները տեղի են ունեցել նավի կամ այլ տրանսպորտային միջոցի խորտակման արդյունքում:

4.3. Ռիսկի աստիճանի փոփոխություն: Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես ոչ ուշ քանի 3 օրացուցային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած և Պայմանագիրը կնքելիս իր կողմից Ապահովագրողին տեղեկացված հանգամանքների այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա, ինչպիսիք են՝

4.3.1. ավելի քան 3 օր անընդհատ ժամկետով բեռի ուղարկման ուշացումը,

4.3.2. Պայմանագրով պայմանավորված փոխադրման կամ բեռնափոխադրման սովորական երթուղուց շեղումները,

4.3.3. բեռի առաքման ձևի փոփոխումը,

4.3.4. բեռի վերաբեռնավորման, փոխբեռնման կամ բեռի նշանակման կետերի փոփոխումը,

4.3.5. բեռի տեղավորումը նավի տախտակամածում կամ նրանց տեղափոխումը պլատֆորմաների վրա, եթե դա Պայմանագրով նախատեսված չի եղել,

4.3.6. բեռն այլ տրանսպորտային միջոցի վրա վերաբեռնումը,

4.3.7. բեռի տեղափոխման և առաքման ժամկետների նշանակալի ուշացումը,

4.3.8. Պայմանագրով չնախատեսված դեպքերում և տեղերում բեռների ձմեռումը:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ

5.1. Ապահովագրական պատահար չեն համարվում բեռի կամ նրա մի մասի կամ ամբողջական կորուստը կամ վնասումը, որն առաջացել է՝

5.1.1. Ապահովադրի, Շահառուի, բեռներ առաքողների կամ նրանց ներկայացուցիչների դիտավորության արդյունքում,

5.1.2. Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների կոպիտ անփութության արդյունքում: Վնասը համարվում է կոպիտ անփութություն հետևանքով հասցված, եթե վերոնշյալ անձանց հայտնի են կամ ի պաշտոնե պետք է հայտնի լինեին գործողությունների կամ անգործություն բացասական ազդեցությունը,

5.1.3. Ապահովադրի, Շահառուի, բեռնափոխադրողի կամ նրանց ներկայացուցիչների կողմից բեռնափոխադրման, բեռնման, բեռնաթափման, վերաբեռնման կամ պահեստավորման սահմանված կարգերի խախտման արդյունքում,

5.1.4. Ապահովադրի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից բեռնափոխադրողի հանդեպ որևէ պարտականություն չկատարման արդյունքում, որն ազդեցություն է ունենում Ապահովագրողի կողմից ստանձնած ռիսկի մեծացման վրա,

5.1.5. ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների, ինչպես նաև մաքսային, սանիտարական և կարանտինային ծառայությունների պահանջով բեռների բռնագրավման, առգրավման կամ կործանման արդյունքում,

5.1.6. ցանկացած տեսակի ռազմական գործողությունների և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, հեղափոխության, ապստամբության, անհնազանդության կամ դրա հետևանքով առաջացած քաղաքացիական անկարգությունների, կամ պատերազմող պետությունների կողմից կատարված կամ դրանց դեմ ուղղված ցանկացած թշնամական գործողության, լողացող կամ լքված ականների, տորպեդների, ռումբերի կամ այլ լքված պատերազմական զենքերի պայթյունի արդյունքում,

5.1.7. ատոմային էներգիայի կիրառման ցանկացած տեսակի հետ անմիջականորեն կապված միջուկային պայթյունների, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կան անուղղակի ազդեցության արդյունքում,

5.1.8. առանց Ապահովագրողին տեղյակ պահելու Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների իմացությամբ ապահովագրված բեռների հետ նույն տրանսպորտային միջոցով վտանգավոր բեռների բեռնավորման արդյունքում,

5.1.9. բեռի արտաքին փաթեթավորման պահպանման, կապարների անվնասության, բեռին հասցված վնասի հետքերի բացակայության պայմաններում բեռի պակասորդի, առանձնահատկությունների կամ բնական հատկությունների (սպառողական հատկությունների, քաշի, քանակի և ծավալի անհետացման, կորստի, չորացման, փտման, ժանգոտման, նորմալ մաշվածքի կամ այլ նմանատիպ երևույթների) արդյունքում,

5.1.10. բեռների ոչ ճիշտ կամ թերություններով փաթեթավորման, սահմանված նորմատիվների խախտման արդյունքում,

5.1.11. բեռի ոչ պատշաճ վիճակում փոխադրման արդյունքում: Բեռի ոչ պատշաճ վիճակում փոխադրման պայմաններ են համարվում այնպիսի պայմանները (խոնավություն, ջերմաստիճան և այլ), որոնք չեն համապատասխանում բեռի անվնաս փոխադրման համար անհրաժեշտ պայմաններին, կարող են առաջացնել բեռի հատկանիշների վատթարացում կամ բեռի՝ նպատակային նշանակությամբ օգտագործման անհնարինություն,

5.1.12. շրջակա միջավայրի կամ նավամբարային (պահեստային, ուղեբեռային-բագաժային) օդի ջերմաստիճանի ազդեցության, այդ թվում ջերմաստիճանային ռեժիմի խախտման կամ սառնոցի (ռեֆրիժերատորի) մինչև 24 ժամ անընդմեջ անսարքության արդյունքում (24 ժամից ավել սառնոցի (ռեֆրիժերատորի) անսարքության կամ ջարդման հետևանքով բեռին պատճառված վնասը հատուցվում է միայն համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում և պայմանով, որ տրանսպորտային միջոցը որով տեղափոխվում է բեռը ունի համապատասխան սարքավորումներ, որոնք արձանագրում են սառնոցի (ռեֆրիժերատորի) աշխատանքը (անսարքությունը)): Սույն կետով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է նաև ապահովել պայման, որ բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի անձնակազմը պարտավոր է իմանալ անսարքության փաստի մասին (մեկ ժամյա ընթացքում)

և այն պահից, երբ հայտնի է դառնում սառնոցի (ռեֆրիժերատորի) անսարքության մասին, անհապաղ միջոցներ ձեռնարկել անսարքությունը վերացնելու ուղղությամբ (հատուցում ստանալու համար Ապահովադիրը պետք է ներկայացնի անսարքությունը 24 ժամվա ընթացքում վերացնելու անհնարինության մասին համապատասխան մասնագետի եզրակացությունը և համապատասխան սարքավորման միջոցով անսարքությունը հիմնավորող արձանագրության պատճեն),

5.1.13. բորբոսի, սնկերի, որդերի, կրծողների, միջատների կամ թռչունների կողմից բեռների վնասման արդյունքում,

5.1.14. բեռի արտադրական թերությունների արդյունքում,

5.1.15. բեռների առաքման հետաձգման, գների անկման, կանխատեսվող շահույթի կորստի և այլ անուղղակի վնասների արդյունքում (ներառյալ տուգանքները ուշ առաքման համար կամ ապահովագրված բեռի վաճառքի ժամկետի ավարտի հետ կապված վնասները),

5.1.16. փոխադրողի (նավի սեփականատերը, նավի օպերատորը, տրանսպորտային միջոցի սեփականատերը և այլն) անվճարունակության կամ սնանկացման արդյունքում, եթե Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը տեղյակ էր այդ փաստի մասին, կամ պետք է տեղյակ լիներ այդ մասին բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ,

5.1.17. նավի անսարքության կամ ապահովագրվող բեռի անվտանգ փոխադրման, պահպանման համար ավտոտրանսպորտային միջոցի, բեռնարկղի կամ պահեստասենյակի ոչ պիտանի լինելու արդյունքում, եթե այդ անսարքության կամ անպիտանելիության մասին տեղյակ էր Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը, կամ պետք է տեղյակ լիներ այդ մասին բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ,

5.1.18. ապահովագրության ենթակա բեռները տեղափոխող նավերի, այլ տրանսպորտային միջոցների կամ կոնտեյներների անպիտանելիության արդյունքում, եթե Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները գիտեին կամ պետք է իմանային այդ մասին բեռնավորման ավարտման պահին,

5.1.19. գործադուլավորների, լոկաուտների, խռովությունների կամ քաղաքացիական անհնազանդությունների մասնակիցների գործողությունների, ինչպես նաև դրանց հետևանքների արդյունքում,

5.1.20. համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես ահաբեկչություն որակված իրադարձություններ, սաբոտաժի գործողությունների, ինչպես նաև հակաահաբեկչական գործողությունների և դրանց հետևանքների արդյունքում,

5.1.21. էլեկտրոնային/էլեկտրական համակարգերի խափանման, մեխանիկական անսարքության արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անսարքությունը առաջացել է ապահովագրության/Ապահովագրողի պատասխանատվության ժամկետում բեռի կամ դրա փաթեթի վրա արտաքին ազդեցությամբ առաջացած վնասների արդյունքում,

5.1.22. ծովահենության (կողոպուտ կամ հանցավոր բռնություն ծովում կամ գետում՝ երրորդ կողմի ունեցվածքը յուրացնելու կամ յուրացման սպառնալիքի համար) արդյունքում,

5.1.23. ավտոմոբիլային փոխադրամիջոցի անհետ կորստի արդյունքում,

5.1.24. ռադիոակտիվ քայքայման/աղտոտման, կամ քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական և էլեկտրամագնիսական զենքերի ազդեցության արդյունքում մասնավորապես.

5.1.24.1. իոնացնող ճառագայթման կամ ռադիոակտիվ աղտոտման արդյունքում, որը կարող է առաջանալ ցանկացած միջուկային վառելիքի կամ միջուկային թափոնների կամ միջուկային վառելիքի այրման արդյունքում,

5.1.24.2. ցանկացած միջուկային կայանի, ռեակտորի կամ այլ միջուկային սարքերի կամ սարքերի միջուկային բաղադրիչների ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ, կամ ցանկացած այլ վտանգավոր կամ քայքայիչ հատկությունների արդյունքում,

5.1.24.3. ցանկացած պատերազմական զենքի օգտագործման արդյունքում,

5.1.24.4. ցանկացած քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ էլեկտրամագնիսական զենքի օգտագործման արդյունքում,

5.1.24.5. ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ ռադիոակտիվ բնույթի այլ վտանգավոր կամ քայքայիչ նյութերի արդյունքում: Այս բացառությունը չի տարածվում միջուկային վառելիքից տարբերվող ռադիոակտիվ իզոտոպների վրա, երբ նման իզոտոպները վերամշակվում, տեղափոխվում, պահվում կամ օգտագործվում են, առևտրային, գյուղատնտեսական, բժշկական, գիտական կամ նմանատիպ խաղաղ նպատակներով,

5.1.24.6. ցանկացած համակարգչի, համակարգչային համալիրի, համակարգչային վիրուսի կամ գործընթացի կամ որևէ այլ էլեկտրոնային համակարգի միջոցով կամ դրանց համակարգչային ծրագրի, վնասաբեր կոդի գործածության արդյունքում:

5.1.25. եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրությունը չի տարածվում և ապահովագրական հատուցում չի տրամադրվում այն վնասների համար, որոնք առաջացել են բեռնումից կամ բեռնաթափումից կամ բեռի պահպանման ժամանակ կամ նշանակման պահեստում կամ առաքման սպասող բեռնման պահեստում:

5.2. Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը՝

5.2.1. Եթե Պայմանագիրը կնքելիս կամ գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հայտնվել են կեղծ տեղեկություններ,

5.2.2. եթե ապահովագրական պատահարը հանցագործության հետևանք է և 18 ամիս հանցագործությունը մնում է չբացահայտված,

5.2.3. եթե Ապահովադիրը (Շահառուն) չի կատարել սույն Պայմաններով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ներկայացման իր պարտականությունները, որի արդյունքում Ապահովագրողը զրկվել է ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, պատճառները, հանգամանքները և/կամ վնասների չափը, ապահովագրական պատահարի պատճառը պարզելու հնարավորությունից,

5.2.4. եթե Ապահովադիրը (Շահառուն) խոչընդոտել է փորձագետների և համապատասխան լիազորված պետական մարմինների աշխատանքներին, ինչը բերել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և/կամ վնասի չափը հաստատելու անհնարինությանը,

5.2.5. եթե Ապահովադրի (Շահառուի) կողմից իրականացվել է միտումնավոր գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն,

5.2.6. եթե Ապահովադիրը (Շահառուն) կեղծել է վնասի ծագման հանգամանքների կամ նրա չափերի վերաբերյալ փաստաթղթերը,

5.2.7. եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (շահառուի) մեղքով,

5.2.8. ինչպես նաև օրենքով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

5.3. Եթե բեռնափոխադրողը հանդիսանում է միևնույն ժամանակ ապահովադիր կամ շահառու և/կամ Ապահովագրողի ապահովագրական գործակալ, Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը այն դեպքում երբ՝

5.3.1. բեռնափոխադրողի վարորդը ապահովագրված բեռը տեղափոխելիս դեպքի պահին եղել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ,

5.3.2. բեռնափոխադրողի վարորդը ապահովագրված բեռը տեղափոխելիս դեպքի պահին չի ունեցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք (ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունքի լիազորագիր կամ ուղեգիր կամ համապատասխան կարգի վարորդական իրավունք),

5.3.3. պատահարը տեղի է ունեցել վարորդի դիտավորյալ գործողությունների արդյունքում:

5.4. Կանոնների համաձայն չեն հատուցվում բեռների վերանորոգման ժամանակ մասնագետների ուղևորության, կացության սննդի և այլ ծախսերը:

5.5. Կանոնների համաձայն չեն հատուցվում Ապահովադրի (Շահառուի) կողմից իրականացված ցանկացած անուղղակի այն ծախսերը, որոնք կատարվել են օրինակ՝ բեռի առաքման կամ տեղ հասցնելու համար սահմանված ժամկետների ուշացման, փոխադրվող բեռի գնի փոփոխության և այլ նմանատիպ պատճառների արդյունքում (բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի վնասները ենթակա են հատուցման ընդհանուր վթարի հետևանքով ծախսերի հատուցման կարգի համաձայն):

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Բեռի ապահովագրական արժեք է համարվում Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ բեռի գտնվելու վայրում նրա իրական արժեքը: Եթե Պայմանագրով նախատեսված է, ապա բեռի ապահովագրական արժեքի մեջ ներառվում են նաև բեռի փոխադրման (տրանսպորտային ծախսեր, մաքսային տուրք և այլ ծախսեր), միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը:

6.2. Բեռի ապահովագրական (իրական) արժեքը՝ ներառյալ բեռի փոխադրման և միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը, որոշվում են դրանք հավաստող փաստաթղթերի հիման վրա: Եթե փաստաթղթերով բեռի իրական արժեքը հաստատված չէ, ապա Ապահովագրողը հիմք է ընդունում բեռի շուկայական արժեքը:

6.3. Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չի կարող գերազանցել բեռի ապահովագրական արժեքը (ներառյալ՝ բեռի փոխադրման, միջանկյալ պահպանման հետ կապված և այլ ծախսերը):

6.4. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում բեռի ապահովագրական արժեքի որոշման համար բեռի փոխադրման և միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը հաշվարկվում են այն չափով, որ չափով դրանք կատարված են մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վայրը բեռի տեղափոխման համար:

6.5. Եթե Պայմանագրով բեռի ապահովագրական գումարը գերազանցում է նրա ապահովագրական արժեքը, ապա Պայմանագիրն առոչինչ է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով:

6.6. Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը փոքր է բեռի ապահովագրական արժեքից ապա դա համարվում է ոչ լրիվ գույքային ապահովագրություն: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է վերջինիս կրած վնասների մի մասը՝ ապահովագրական գումարի՝ ապահովագրական արժեքի նկատմամբ համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

7.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից Պայմանագրի համաձայն կարող է վճարվել միանվագ (միանգամյա մուծումով) ապահովագրության ողջ ժամկետի համար կամ մաս-մաս՝ համաձայն Պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

7.4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել անկանխիկ՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.5. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.6. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար կարող է սահմանել լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր կամ բանավոր ծանուցելով Ապահովադրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

7.7. Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Այս դեպքում Ապահովադրի կողմից նախապես Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

7.8. Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված Ապահովագրավճարի չափը կամ ընդհանրապես հրաժարվել վճարել ապահովագրական հատուցումը բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

7.9. Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23:59 ժամը:

7.10. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է Ապահովադրից (Շահառուից) պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար:

7.11. Եթե Ապահովադիրը (Շահառուն) դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություններ մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու Պայմանագիրը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.12. Ապահովադրի (Շահառուի) կողմից Կանոնների 7.11 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև սահմանված ձևով ձեռք բերված համաձայնություն է, ըստ որի՝ Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Ապահովադրին (Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի, ներառյալ՝ համապատասխան էլեկտրոնային միջավայրում կատարված հարցման հիման վրա: Ընդ որում, Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ (ներառյալ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ) մեկ փաստաթուղթ կազմելու, այնպես էլ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

8.2.1. փոստային, հեռագրային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.2. Ընկերության կողմից համապատասխան տեխնիկական հնարավորություններ ներդրված լինելու դեպքում՝ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով: Սույն կետով նշված եղանակով պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Վկայագրի՝ էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ Պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական

օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Վկայագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.3. օրենքով չարգելված այլ եղանակներով:

8.3. Պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի միջև առավելագույնը 180 օր ժամկետով:

8.4. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի համաձայն տալիս է կրկնօրինակ, որից հետո կորցրած օրինակը համարվում է անվավեր: Ապահովագրողը կարող է Ապահովադրից գանձել Պայմանագրի կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար կատարված ծախսերի գումարը:

8.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն սույն գլխով նախատեսված կարգով կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.6. Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ

9.1. Պայմանագրով Ապահովագրողի պարտավորությունը դադարում է (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրում) սույն կետում նշված ժամկետներից որևէ մեկով՝ կախված այն բանից, թե նշվածներից, որ ամսաթիվն է հանդիսանում ամենաառաջինը՝

9.1.1. նշանակման վայրում բեռ ստացողի կողմից բեռի ընդունման պահից,

9.1.2. նշանակման վայր բեռը հասնելու օրվա 24:00 ժամից,

9.1.3. Պայմանագրում նշված գործողության ժամկետի ավարտի օրվա 24:00 ժամից:

9.2. Արդեն կնքված Պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվությունը չի ծագում, եթե՝

9.2.1. բեռնափոխադրումը չի կայացել,

9.2.2. Պայմանագիրը կնքվել է օրենքի և այլ իրավական ակտերի խախտումով,

9.2.3. Պայմանագիրն առոչինչ է, մասնավորապես՝

9.2.3.1. Ապահովադրի (Շահառուի) մոտ առկա է գույքային շահերի բացակայության,

9.2.3.2. Պայմանագրի կնքումից հետո պարզվում է, որ Ապահովադիրը Պայմանագրի կնքման պահին նախապես հայտնել է կեղծ կամ անարժանահավատ տվյալներ, որի դեպքում Ապահովագրողն իրավունք կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պատասխանատվության միջոցներ,

9.2.4. բեռնափոխադրումն իրականացվում է բեռների փոխադրման համար իրավական ակտերով սահմանված իրավասություն չունեցող անձի կամ կազմակերպության կողմից (առանց գրանցման կամ առանց հատուկ թույլտվության (արտոնագրի), այն դեպքում, երբ նման թույլտվությունը (արտոնագիրը) պարտադիր է կամ լիցենզավորման պայմանների խախտմամբ),

9.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

9.4. Պայմանագրի գործողությունը դադարում է, երբ՝

9.4.1. Պայմանագրի Կողմերը Պայմանագրով միմյանց նկատմամբ սահմանված պարտավորությունները կատարել են ամբողջ ծավալով,

9.4.2. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը վերացել է՝ կապված ապահովագրական պատահարով չպայմանավորված հանգամանքների տեղի ունենալու հետ,

9.4.3. Ապահովադիր իրավաբանական անձը լուծարվել է կամ Ապահովադիր ֆիզիկական անձը մահացել է, եթե Պայմանագրով Շահառու նախատեսված չէ,

9.4.4. Պայմանագիրը դատարանի կողմից ճանաչվել է անվավեր:

9.5. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

9.6. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան տասնհինգ օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

9.7. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

(Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար x 20%) / Պայմանագրի գործողության օրեր x Պայմանագրի չլրացած օրեր,

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

9.8. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

(Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար x 20%) / Պայմանագրի գործողության օրեր x Պայմանագրի չլրացած օրեր:

9.9. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար բացառությամբ այն դեպքերի երբ ապահովագրական հատուցումը մերժվել է:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. **Ապահովադիրն իրավունք ունի՝**

10.1.1. ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

10.1.2. Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի կետերի վերաբերյալ,

10.1.3. ստանալ Կանոնները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը,

10.1.4. պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում՝ Պայմանագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

10.1.5. սույն Կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

10.1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարինել Պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին, սակայն Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար, կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը,

10.1.7. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ դիմումի հիման վրա ստանալ կրկնօրինակը:

10.2. **Ապահովադիրը պարտավոր է՝**

10.2.1. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետ(ներ)ում վճարել Ապահովագրավճարը,

10.2.2. պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով պատահարի մասին հայտնել Ապահովագրողին,

10.2.3. ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

10.2.4. կատարել ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

10.3. **Ապահովագրողը իրավունք ունի՝**

10.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների կատարումը,

10.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,

10.3.3. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

10.3.4. ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են

եկել այնպիսի հանգամանքներ, որի պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,

10.3.5. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի գումարի հետ,

10.3.6. պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,

10.3.7. Ապահովադրից պահանջել ապահովագրվող բեռի զննում իրականացնելու հնարավորության ապահովում: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադրի հետ համաձայնեցնում է զննում անց կացնելու հետ կապված խնդիրները, այդ թվում զննում անց կացնելու ամսաթիվը, ժամը և տեղը, իսկ զննման արդյունքները պետք է նշվեն բեռի զննման նախապայմանագրային ակտում,

10.3.8. Ապահովադրից պահանջել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և համապատասխանաբար դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա

10.3.9. իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4. **Ապահովագրողը պարտավոր է՝**

10.4.1. Ապահովադրին ծանոթացնել Կանոններին և տրամադրել օրինակը,

10.4.2. Ապահովադրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.4.3. Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին որոշում,

10.5. Ապահովադիրը, Ապահովագրողը, և Շահառուն պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

10.6. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

11.1. Ապահովագրողն իրավասու է ՀՀ գործող օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով նախատեսված բոլոր ծանուցումները (որոշումներ, փաստաթղթերը և այլ

նյութեր) Կանոններով և Պայմանագրով նախատեսված անձանց հանձնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

11.1.1. առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ,

11.1.2. Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի)՝ Պայմանագրում նշված հասցեով պատվիրված նամակով ուղարկելու միջոցով,

11.1.3. իր էլեկտրոնային փոստի հասցեից Ապահովադրի՝ Պայմանագրում նշված կամ Ապահովագրողին գրավոր ձևով տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով,

11.1.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու միջոցով՝ անձի համաձայնության առկայության դեպքում:

11.2. Ապահովադիրը (Շահառուն) Կանոններով և Պայմանագրով ներկայացման ենթակա դիմումները (այդ թվում՝ հայտային դիմում), ծանուցումները, փաստաթղթերը և այլ նյութերը Ապահովագրողին կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով՝

11.2.1. այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ ուղարկվում է Ապահովագրողի պաշտոնական փոստային հասցեին,

11.2.2. այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ Ապահովագրողի համաձայնությամբ, ուղարկվում է Ապահովագրողի էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) Ապահովագրողի հեռախոսահամարին կամ մուտքագրվում է տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում:

11.3. Սույն գլխում նշված որևէ եղանակով կատարված բոլոր ծանուցումները, ներկայացված դիմումները, փաստաթղթերը և այլ նյութերը համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի) կողմից, և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել.

11.3.1. ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

11.3.2. պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ նամակի ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձման պահին հաջորդող օրվանից,

11.3.3. էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) ուղարկվելու դեպքում՝ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,

11.3.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու դեպքում՝ մուտքագրման օրվան հաջորդող օրվանից,

11.3.5. բաժնում մուտքագրելու դեպքում՝ մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ

12.1. Ապահովադիրը (Շահառուն), այն պահից սկսած, երբ իրեն հայտնի է դարձել Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, պարտավոր է՝

12.1.1. հնարավոր վնասները կանխելու և փոքրացնելու ուղղությամբ, բեռը փրկելու նպատակով ձեռք առնել ողջամիտ և հնարավոր միջոցառումներ: Այդպիսի միջոցառումների իրականացման ժամանակ Ապահովադիրը պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսի ցուցումներ նրան տրվել են,

12.1.2. ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին անհապաղ տեղեկացնել օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավասու մարմիններին,

12.1.3. անհապաղ, տեղեկացման փաստը հավաստող ցանկացած եղանակով բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին և ներկայացնել պատահարի տեղի ունենալու փաստի վերաբերյալ այդ պահին ունեցած ողջ տեղեկատվությունը,

12.1.4. Ապահովագրողին Ապահովադրի կողմից վնասի մասին տեղեկացման փաստը, ինչպես նաև Ապահովադրի կողմից բեռնափոխադրողին դեպքի կապակցությամբ ներկայացվելիք պահանջները (հայցերը) պետք է հավաստվեն գրավոր ապացույցներով (անդորրագրերով, ստացականներով և այլն),

12.1.5. սահմանված կարգով Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցում վճարելու մասին գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման ամսաթիվը, ապահովագրական դեպքի տեղի ունենալու վերաբերյալ իրեն հայտնի բոլոր էական տեղեկությունները:

12.2. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական պատահարից հետո եռամսյա ժամկետում պետք է Ապահովագրողին ներկայացնի սահմանված ձևով գրավոր դիմում՝ նշելով պահանջվող տվյալները, մասնավորապես՝ պատահարի տեղի ունենալու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դիմումին կցի պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.3. Ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է համապատասխան փաստաթղթերով ապացուցել՝

12.3.1. ապահովագրված բեռի նկատմամբ իր գույքային շահերը,

12.3.2. ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը,

12.3.3. վնասի մոտավոր չափերը,

12.3.4. Ապահովագրողի կողմից մեղավոր կողմի նկատմամբ սուբրոգացիայի պահանջի իրավունքի հայցի ներկայացումն ապահովելու ուղղությամբ իր պարտականությունների պատշաճ կատարումը:

12.4. Հիմնավորող հիմնական փաստաթղթեր են համարվում ապահովագրված բեռի նկատմամբ գույքային շահը հիմնավորելու համար՝ նավաբեռնագիրը, երկաթուղային և օդային բեռնագրերը և այլ փոխադրական փաստաթղթերը, առք ու վաճառքի պայմանագրերը, ապրանքագրերը (ֆակտուրաներ) և հաշիվները, եթե այդ փաստաթղթերի

համաձայն Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի տնօրինել բեռը, ֆրախտի ապահովագրության դեպքում՝ չարտեր - խմբաքանակը և նավաբեռնագիրը,

12.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստի ապացուցման համար՝ տրանսպորտային միջոցի տեսակից կախված ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

12.5.1. ***ծովային փոխադրումների դեպքում՝*** ծովային բողոքագիր, նավամատյանից քաղվածք, վթարային հավաստագիր, ընդհանուր վթարի վերաբերյալ դիսպաշերի ակտ և ապահովագրական պատահարի պատճառների վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթեր:

12.5.1.1. նավի անհետ կորստի դեպքում՝ վերջին նավահանգստից դուրս գալու և հերթական նավահանգիստ ժամանելու սպասվելիք ամսաթվի մասին հավաստի տվյալներ:

12.5.1.2. նավը համարվում է անհետ կորած, երբ նրա մասին ոչ մի տեղեկատվություն չի ստացվել երեք ամսվա ընթացքում, իսկ եթե տեղեկատվության ստացումը երկարաձգվել է պատերազմական գործողությունների արդյունքում՝ ապա վեց ամսվա ընթացքում:

12.5.2. ***երկաթուղային փոխադրումների դեպքում՝*** առևտրային ակտ, ընդհանուր ձևի կամ այլ ակտ, վնասի մասին նշումով երկաթուղային բեռնագիր,

12.5.3. ***ավտոմոբիլային փոխադրումների դեպքում՝*** առևտրային ակտ, զննման կամ վնասի որոշման օրենսդրությամբ սահմանված այլ ակտ, ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ Պետավտոտեսչության արձանագրությունը, գույքի առևանգման կամ դիտավորյալ ոչնչացման փաստի վերաբերյալ քրեական գործի հարուցման մասին ՀՀ Ոստիկանության կամ համապատասխան լիազորված մարմինների տեղեկանքը,

12.5.4. ***օդային փոխադրումների դեպքում՝*** տեղի ունեցած պատահարի մասին նշումով բեռնագիր, առևտրային ակտ,

12.5.5. վնասի չափի ապացուցման և հիմնավորման համար՝ առևտրային ակտեր, Ապահովագրողի համապատասխան լիազորված ներկայացուցչի (վթարային կոմիսարի) կողմից բեռի զննման ակտեր, փորձաքննության ակտեր, գնահատումներ և նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնք կազմված են օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների և կազմակերպությունների կողմից,

12.5.6. պատասխանատու անձի նկատմամբ Ապահովագրողի կողմից հայցի ներկայացման ապահովմանն ուղղված Ապահովադրի պարտավորությունների պատշաճ կատարումն հիմնավորելու համար՝ Ապահովադրի կողմից բեռնափոխադրողին ներկայացված պահանջի պատճենը՝ բեռնափոխադրողի կողմից այդ փաստաթղթի ընդունման նշումով կամ բեռնափոխադրողին ուղարկված փոստային անդորրագրի պատճենով:

12.6. Եթե հատուցման իրականացման (վնասի գնահատման) համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից (Շահառու) պահանջել փորձաքննության անցկացում, որը անց է կացվում Ապահովագրողի հաշվին:

12.7. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումին կից չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա Ապահովագրողը պարտավոր է դիմումի ստացման օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում Ապահովադրին (Շահառուին) տրամադրել վերջինի կողմից ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը: Սույն կետով նախատեսված

պակաս փաստաթղթերը պետք է Ապահովագրողին ներկայացվեն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

12.8. Դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում համապատասխան ժամկետները կետանցած անձը զրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և (կամ) կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը Կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել Ապահովագրողի կողմից:

12.9. Սույն Կանոններով ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետները բաց թողած անձն ապացուցում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության փաստը՝

12.9.1. ժամկետի բացթողման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը, որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը՝ ներառյալ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և (կամ) ուժի մեջ մտած չլինելու պատճառով,

12.9.2. անձը դիմումը կամ պատասխանը ներկայացրել է կամ տեղեկացման պարտավորությունը կատարել է Կանոնների 12.10.1 ենթակետով նախատեսված հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար սույն կանոններով սահմանված ժամկետում:

12.10. Փաստաթղթերի ներկայացման ժամկետի բացթողումը Ապահովագրողի կողմից կարող է հարգելի ճանաչվել այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված դեպքերում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է փաստաթղթերի ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով:

ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

13.1. Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է, որը վճարվում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) փոխադարձ համաձայնությամբ կարող է վճարվել նաև համարժեք գույքով կամ կարող է իրականացվել վնասված գույքի վերանորոգում, բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը կամ դրան համարժեք գույքը:

13.2. Ապահովագրական հատուցման ժամանակ առաջնահերթությունը տրվում է պարտադիր ապահովագրության տեսակներին:

13.3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին՝

13.3.1. բեռի ոչնչացման, կորստի կամ վնասվելու հետևանքով առաջացած վնասները (ապահովագրության պայմաններից կախված),

13.3.2. բեռի փրկման և միջանկյալ պահպանման, բեռի վնասման արդյունքում հնարավոր ծախսերի նվազեցման և վնասի չափի որոշման համար անհրաժեշտ և նպատակային կատարված ծախսերը,

13.3.3. ընդհանուր վթարի հետևանքով առաջացած վնասները և ծախսերը (ծովային փոխադրման դեպքում):

13.4. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է՝ ելնելով ապահովագրական գումարից, ապահովագրական արժեքից, չհատուցվող գումարից և Կանոնների 12.4.3. կետում թվարկված փաստաթղթերից:

13.5. Բեռի ամբողջական ոչնչացման կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափով՝ մասհանելով ոչ պայմանական չհատուցվող գումարը:

13.6. Բեռի մի մասի ոչնչացման կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշվում է ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով՝ ամբողջ բեռի արժեքի և բեռի վնասված մասի արժեքի հարաբերության համամասնությամբ:

13.7. Բեռի վնասվելու դեպքում Կանոնների ապահովագրական հատուցման չափը որոշվում է Կանոնների 12.5.3 կետում նշված փաստաթղթերին համապատասխան, որոնք որոշում են բեռի վնասի չափը (կամ անկախ փորձաքննության արդյունքներով)՝ բեռի ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի համամասնությամբ:

13.8. Բեռի հետ տրանսպորտային միջոցի անհետ կորելու դեպքում (բացառությամբ ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ) ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրական գումարի չափով մասհանած՝ ոչ պայմանական չհատուցվող գումարը:

13.9. Բեռի փրկմանը, վնասների կանխմանն ու փոքրացմանն ուղղված Ապահովադրի ծախսերը Ապահովագրողի կողմից հատուցվում են, եթե այդ ծախսերը եղել են արդյունավետ, հիմնավոր, խելամիտ և նպատակային:

13.10. Ապահովագրողը կատարում է ապահովագրական հատուցում միայն ապահովագրական գումարի սահմաններում, անկախ այն բանից, որ վնասների չափերը կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, իսկ Կանոնների 13.1.2-13.1.3 կետերով սահմանված կարգով Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերը չեն կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 2 %-ը:

13.11. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ կամ իր ներկայացուցչի նշանակման միջոցով հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները, ինչպես նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

13.12. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

13.13. Տարաձայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետի կողմից: Այս

դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

13.14. Ապահովագրողն Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է պատճառաբանված որոշում՝ ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կայացնելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Ապահովադրին, Շահառուին:

13.15. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:

13.16. Հատուցման վճարումը կատարվում է գումարի փոխանցումով ստացողի բանկային հաշվին: Բանկային հաշիվը կարող է նշվել ինչպես ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին ներկայացված դիմումի մեջ, այնպես էլ ներկայացվել առանձին դիմումով:

13.17. Ապահովագրողի կողմից հատուցման վճարման մերժման մասին որոշումը ծանուցվում է Ապահովադրին (Ապահովագրողին կամ Շահառուին)՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

13.18. Հատուցման վճարման կամ մերժման որոշման կայացման ժամկետները Ապահովագրողի կողմից կարող են հետաձգվել, եթե ապահովագրական պատահարի հետ կապված փաստերը ճշգրտելու համար իրավական ակտերով սահմանված հիմքերով նշանակված է լրացուցիչ ստուգում/փորձաքննություն, նախաձեռնվել է քրեական վարույթ կամ դատական գործընթաց՝ մինչև նշված գործընթացների ավարտը կամ առկա են Կանոններով հատուցման վճարմանը խոչընդոտող այլ իրավիճակներ:

13.19. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը պարզվում է, որ տվյալ բեռը ապահովագրված է նաև մեկ այլ ապահովագրողի կամ ապահովագրողների կողմից համանման ապահովագրական պատահարներից և համընդհանուր ապահովագրական գումարը գերազանցում է բեռի փաստացի ապահովագրական արժեքը, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարում է հատուցման ենթակա գումարի այն մասի չափով, որը համամասնական է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և Ապահովադրի կողմից այլ Ապահովագրողների հետ կնքված Պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերությանը:

13.20. Այն դեպքում, երբ Պայմանագրով, Ապահովադիրն ապահովագրավճարի վճարումները կատարում է փուլային կարգով (տարաժամկետ վճարման եղանակով), ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման գումարից պահվում են Ապահովադրի կողմից չմուծված ապահովագրավճարները, որից հետո Ապահովադիրը համապատասխան չափով ազատվում է ապահովագրավճարի հետագա մուծումներից:

13.21. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի որոշումը կազմելու ամսաթվից:

13.22. Ապահովադիրը (Շահառուն) երրորդ անձից վնասների հատուցում ստանալու դեպքում պարտավոր է անհապաղ Ապահովագրողին հայտնել այդ մասին:

13.22.1. եթե Ապահովադիրը (Շահառուն) տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ պայմանագրի հիման վրա կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից, ապա Ապահովագրողը մերժում կամ համապատասխան չափով նվազեցնում է ապահովագրական հատուցման վճարումը:

13.22.2. եթե ապահովագրական հատուցումը վճարելուց հետո պարզվում է, որ առկա են եղել կամ ի հայտ են եկել ապահովագրական հատուցումը մերժելու կամ համապատասխան չափով նվազեցնելու հիմքեր, ապա Ապահովագրողը վերանայում է հատուցման որոշումը՝ կայացնելով ապահովագրական հատուցումը մերժելու կամ մասնակի մերժելու մասին նոր որոշում, իսկ Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել իրեն վճարված կամ ավել վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

14.1. Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար:

14.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական: Այն սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային կամ բացարձակ դրամական արտահայտությամբ:

14.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

14.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

15.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա կամ Շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

15.3. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի կամ Շահառուի մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ

ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Շահառուից վերադարձնել ավել վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

16.1. Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

16.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:

16.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

17.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

17.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

17.3. Կետ 17.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

17.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

17.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 17.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև

հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

18.1. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

18.2. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

18.3. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: